

ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հայերենի կառուցվածքի այլ բաժինների համեմատությամբ շարահյուսությունն առավել քիչ ուղղորդության արժանացած, քիչ ուսումնասիրված բաժինն է: Նուրբ կես դար է անցել մեծավաստակ հայագետ Մ. Արեղյանի մեծ վաստակներից մեկի՝ «Աշխարհաբարի շարահյուսությունն» աշխատության հրատարակումից: Այդ ժամանակաշրջանը լեզվի շարահյուսական կառուցվածքի մեջ փոփոխությունների համար այնքան էլ փոքր չէ, մանավանդ եթե նկատի ունենանք, որ շարահյուսական իրողությունները, օրինակ, ձևարանականի հետ համեմատած, ավելի զգայուն են, ավելի հեշտ փոփոխվող: Սովետական շրջանում որոշ աշխատանք է արվել ժամանակակից հայերենի շարահյուսության սխեմամատման, նորմավորման ուղղությամբ զսրոցական դասադրքի սահմաններում (տե՛ս պրոֆ. Գ. Սևակի «Հայոց լեզվի շարահյուսություն» զսրոցական դասադիրքը), իսկ շարահյուսական փաստական նյութի ուսումնասիրությունը սահմանափակվել է միայն մի երկու խոսքի մասերի վերաբերյալ մենագրական ուսումնասիրություններում տվյալ խոսքի մասի շարահյուսական կիրառություններին նվիրված բաժիններով: Այնպես որ վաղուց հասունացել էր ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքի ամբողջական ու հանգամանալից ուսումնասիրության պահանջը:

Միանգամայն ողջունելի է, որ Վ. Առաքելյանը նախաձեռնել է այդ դժվարին ու պատվարե դործը, միայնակ ավարտել է այն՝ երկու հատորով, որի առաջին հատորն արդեն հրատարակվել է¹: Հենց սկզբից նշենք, որ այդ աշխատությունը ճիշտ էլիներ վերնագրել ոչ թե հայերենի, այլ ժամանակակից հայերենի շարահյուսություն, քանի որ նրանում քննված է ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքը:

Հեղինակը տարիների ընթացքում հավաքել է 19-րդ և 20-րդ դարերի հայ գրականությունից և մամուլից հսկայական փաստական նյութ և չրա հիման վրա կատարել ուսումնասիրությունը: Փաստական նյութի առատությունը, որ մանավանդ շարահյուսության նվիրված ուսումնասիրություններում անհրաժեշտ է, հանդիսանում է զրախոսվող աշխատության արժանիքներից մեկը: Առանց փաստական առատ նյութի հնարավոր չի լինի կատարել ամբողջական, հանգամանալից ուսումնասիրություն, քերականական իրողությունները քննել իրենց հնարավոր բոլոր մանրամասնություններով: Փաստական հարուստ նյութը ուսումնասիրողին օգնում է, ուղղություն է տալիս դանդաղ այս կամ այն օրինաչափությունը, իսկ ընթերցողի համար այն պետք է՝ ուսումնասիրության մեջ ներկայացված օրենքների, կանոնների ճշտման մեջ համոզվելու և դրանց տարրեր զրոհորոհմանը դիտելու համար:

Հեղինակը, ինչպես նշված է աշխատության առաջաբանում, ուսումնասիրությունը կատարելիս նկատի է ունեցել ՍՍՌՄ Դիտությունների ակադեմիայի Հեղվարանության ինստիտուտի կազմած՝ ուսուցիչների քերականության շարահյուսության բաժինը և ձգտել է տալ այդ տիպի ուսումնասիրություն: Նիշյալ աշխատության առկայության փաստը և հեղինակի հակումը՝ օգտագործելու ժամանակակից ուսական շարահյուսության նվաճումները անկասկած զրականորեն են ազդել աշխատության վրա:

Աշխատության զրախոսվող հատորը մի ամբողջություն է ներկայացնում. այն նվիրված է պարզ նախադասության և նրա կառուցվածքի ուսումնասիրմանը: Նյութը քննված է բազմակողմանիորեն, որը կարող է երևալ հարցերի թեկուզ և ընդհանուր թվարկումից, այն է՝ նախադասության տեսակներն ըստ արտահայտման նպատակի (եղանակի), պարզ նախադասության գլխավոր անդամներ, համաձայնություն, նախադասության երկրորդական անդամներ, բազմակի անդամներ, տրոհվող լրացումներ, պարզ նախադասության շարադասությունը:

Առաջին գլխում, որը ոչ ճիշտ կերպով վերնագրված է «Պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասություն» (չէ՞ որ սա փաստորեն ամբողջ գրքի խորագիրն է), հեղինակը քննում է նախադասության տեսակներն ըստ արտահայտման նպատակի (եղանակի): Այստեղ ուսումնասիրված են պատմողական, հարցական, հրամայական և բացականչական նախադասությունները, սրանց հատկանիշները և կիրառությունները:

Երկրորդ՝ «Պարզ նախադասության գլխավոր անդամներ» գլխում հեղինակն ամ-

¹ Վարդ Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր Ա, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1958:

Նայել մանրամասնությունները քննում է ենթական և ստորոգյալը իրենց տարբեր արտահայտություններով, կազմությամբ և իմաստային երանգներով: Այսպես, օրինակ, քննված են ենթականի արտահայտությունները զոյականով, զերանվան տարբեր տեսակներով, ածականով, թվականով, բայի տարբեր ձևերով, բառակապակցություններով, նույնիսկ ոչ նյութական իմաստ ունեցող խոսքի մասերով, ամբողջ նախադասությամբ (իհարկե, դորժածոված փոխանունաբար): Այս և ոչ միայն այս գլխում ընթերցողն զգում է հայոց լեզվի պարմանալի ձկունությունը, տեսնում իմաստային բազմապիսի նրբերանգներ արտահայտելու նրա հարուստ հնարավորությունները:

Նույն ձևով են քննված ստորոգյալը, նրա տեսակները և արտահայտությունները: Բայական ստորոգյալի ուսումնասիրման բաժինը ըստ էության միաժամանակ հանդիսանում է ժամանակակից հայերենի բայի ժամանակների կիրառությունների մանրամասն քննություն: Այս տեսակետից առանձնապես ուշադրության արժանի են երկրորդական բաղադրյալ ժամանակները, որոնք սահմանափակ կիրառություններ ունեն, և որոնց վերաբերյալ, այնուամենայնիվ, բավական փաստական նյութ կա աշխատության մեջ:

Վ. Առաքելյանը ստորոգյալները բաժանում է երկու ընդհանուր խմբի՝ բայական և անվանական: Բայական ստորոգյալները կազմվում են միայն բայից: Իսկ անվանականների շարքն են դասվում այն ստորոգյալները, որոնք կազմվում են կամ որոնց վերագրվում կազմվում է անուններից, այլ խոսքի մասերից (բացի բայից): Սրանցից յուրաքանչյուրը լինում է պարզ և բաղադրյալ: Բայական ստորոգյալներից պարզ են համարվում այն բայի եղանակների բոլոր գլխավոր ժամանակներից կազմվածները: Բայական բաղադրյալ են համարվում երկրորդական բաղադրյալ ժամանակներով կազմված ստորոգյալները, հարադիր բարդ բայերով և այլ բայական բաղադրյալ կապակցություններով արտահայտված ստորոգյալները: Անվանական պարզ ստորոգյալ է համարվում այն ստորոգյալը, որը կազմված է մեկ անունից՝ առանց հանդույցի: Օրինակ՝ Սեզ ժայռերը՝ արծվի բալյն, լճակները լույս-փնուղ (էջ 150): Բաղադրյալ անվանական են համարվում այն ստորոգյալները, որոնք կազմված են ոչ բայական վերագրից և բայական որևէ բաղադրիչից:

Ինչպես երևում է ստորոգյալի կազմության ուսումնասիրման սույն համառոտ քննությունից, Վ. Առաքելյանը այս հարցում (ինչպես և այլ հարցերում) ամբողջությամբ չի մոռում տրագիգիայի սահմաններում, կատարում է որոշ վերադասակարգումներ, նկատում է ուշադրության շարժանցած երևույթ՝ հանձին պարզ անվանական ստորոգյալի, թեև դա զրական լեզվում այնքան էլ լայն տարածում չունի:

Բացի ստորոգյալի վերոհիշյալ տեսակներից, հեղինակն ընդունում է նաև, այսպես ասած, բարդ ստորոգյալ: «Բարդ կոչում ենք այնպիսի ստորոգյալը, որ կազմված է անվանական և բայական ստորոգյալների (ընդգծումն իմն է— Ս. Ա.) միասնությունից» (էջ 146): Ահա բերված օրինակներից մեկը. «Ես պարտավոր եմ իր հարսանիքին բոկոտն օղակել» (էջ 146): Այստեղ և բերված մյուս օրինակներում չկան ստորոգյալներ, այլ կա մեկ ստորոգյալ՝ կազմված անվանական և բայական բաղադրիչներից, իսկ այսպիսի կազմություն ունեցող ստորոգյալը զրբում անվանված է բաղադրյալ, ուստի և այդ բարդ համարվածները ևս, կարծում ենք, պետք էր նույնպես դասել բաղադրյալների շարքը և չդիտել որպես ստորոգյալի մի առանձին տեսակ:

Հանգամանքներն է քննված ենթականի և ստորոգյալի համաձայնությունները հեղինակը ոչ միայն բավական մանրամասնել է մինչև այժմ ընդհանուր ձևով դիտվածը, այլև իր հերթին նկատել է շարահյուսական մի շարք երևույթներ: Հարցի քննությունը այստեղ, ինչպես և այլ բաժիններում, կատարված է ըստ խոսքի մասերի և նույնիսկ ըստ վերջիններիս տեսակների: Քննվում են նաև մի շարք այնպիսի մասնակի հարցեր, որոնք ավելի ոճական, քան թե քերականական արժեք ունեն:

Գրախոսվող աշխատության ամենահարուստ գլուխը նախադասության երկրորդական անդամներին նվիրված գլուխն է: Քննված են նաև ենթականի լրացումները՝ որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը, նրանցից յուրաքանչյուրի հետ կապված համաձայնությունները և ապա ստորոգյալի լրացումները: Քոսեկով տարբեր խոսքի մասերի, նախադասության այս կամ այն անդամի զերով հանդես գալու մասին, հեղինակը բազմաթիվ օրինակներով ցույց է տալիս դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունը: Առանձնապես հետաքրքրական է ենթականի լրացումների հետ կապված համաձայնության քննությունը: Հեղինակն այստեղ նկատել է տարբեր բառախմբերի հետ կապված ուշադրավ երևույթներ՝ համաձայնության տեսակետից:

Մինչև այժմ ժամանակակից հայերենի քերականագիտական դրականության մեջ խոռոչի եղել հատկացուցիչի և հատկացյալի համաձայնության մասին: Առաքելյանն առաջին անգամ գտնում է, որ հատկացուցիչի և հատկացյալի միջև գոյություն ունեն թվի համաձայնության որոշ օրինաչափություններ: Ահա այդ համաձայնության կանոններից առաջինը. «Հատկացուցիչի պահանջով» (ընդգծումը իմն է՝ Ս. Ա.) հատկացյալը հոգնակի է գրվում, երբ հատկացուցիչը հոգնակի է և հոգնակի հատկացուցիչի մեջ լքտնոդ յուրաքանչյուրին պատկանում է հատկացյալից (իմա՝ հատկացյալի ցույց տված առարկայից... Ս. Ա.) մի-մի հատ (էջ 266): Բերենք օրինակներից մեկը. «Մեզ ուղեկցեցին մինչև նավահանգիստ՝ ուսերի վրա բերելով մեր իրերը» (էջ 266): Հատկացուցիչի և հատկացյալի թվի համապատասխանությունը, ինչպես երևում է օրինակից և սահմանումից, ըստ էության տրամաբանական անհրաժեշտության արդյունք է. դա բուն քերականական համաձայնությունն է: Վերոհիշյալ սահմանման մեջ տեղին է հատկացուցիչի պահանջով բառակապակցությամբ արտահայտված պատճառաբանությունը: Հատկացյալը հոգնակի է գրվում պարզապես այն պատճառով, որ հատկացուցիչի ցույց տված անձանց առարկաների քանակը շատ է: Այնպես որ այս կարգի համապատասխանությունները հատկացուցիչի պահանջով չեն և հետևապես՝ սոսկ քերականական չեն: Վերևի օրինակի հետ համեմատելով. Ուսերի վրա բերեցին մեր իրեր (մի քանի հոգու պատկանող մեկ իրը), իմ իրերը:

Լավ են վերլուծված բացահայտիչի և բացահայտյալի համաձայնության զեպերը: Վ. Առաքելյանն առանձնապես ինքնուրույնություն է պատճառել խնդիրների ուսուսանողության գործում: Նա ընդունում է լեզվի խնդիր հետևյալ տեսակները. արտաքին, հետևանքի, ներքին, երկրորդական ուղիղ խնդիրներ և հանգամանքներն վեր է լուծում դրանք:

Անուղղակի խնդիրների քննությունը ևս կատարում է ըստ արտահայտության միջոցների: Նախ քննված են հոլովներով (առանց կապերի) արտահայտված խնդիրները և ապա կապերով արտահայտվածները: Հեղինակը դիտում է քննում է խնդիրների հետ կապված մի շարք երևույթներ, ցույց է տալիս այս կամ այն բառախմբի շարահյուսական կիրառության յուրահատկությունները և այլն:

Հանգամանքներն են քննված ստորոգյալի նաև մյուս լրացուցիչները պարագաները, որոնց ընդհանուր տեսակներն ընդունելով հանդերձ (տեղի, ժամանակի, ձևի և այլն)՝ դրանք բաժանում է մի շարք ենթատեսակների: Այսպես, օրինակ, տեղի պարագաները բաժանում է հետևյալ ենթատեսակների՝ ուղիղության և ժամանակի, ելման, անդամի:

Ուղղադրամ է ընդհանուր պարագայի զաղափարը, որ Առաքելյանն առաջին անգամ մտնում է մեր քերականագիտության մեջ: Այդպիսիք են համարված այն պարագաները, «որոնք համատեղում են երկու կամ ավելի նշանակություններ և նայած իրենց գործածության հանգամանքներին՝ մեկ այս իմաստը կարող է ուժեղ լինել, մեկ էլ՝ մյուսը» (էջ 395): Ահա մի օրինակ. «Ողորդում կլուրում էլի երբեմն-երբեմն հանդիպում էլիս իրար» (էջ 395): Ընդգծված պարագան արտահայտում է և՛ քանակական, և՛ ժամանակային իմաստ, որ և հիմք է տալիս հեղինակին՝ համարելու ընդհանուր (լավ կլինեք ասել՝ ընդհանրական) պարագա:

Նախադասության բաղադրի անգամների բաժանում հեղինակը զգալիորեն զուրս է դալիս տրադիցիայի սահմանների: Այստեղ քննված են բաղադրի երկրորդական անդամներն ունեցող նախադասությունները, այլև բաղադրի ենթականերով ու բաղադրի ստորոգյալներով նախադասությունները: Սա ըստ էության նշանակում է, որ հեղինակը միաժամանակ նախադասությունները (որոնք գործող զասագրքերում բարդ նախադասություն են համարվում) դիտում է իրեն պարզ նախադասություն:

Հնարավոր է մեկ գրախոսականում անդրադառնալ այն բոլոր հարցերին, որոնք քննված են մի ստվարածավալ աշխատության մեջ: Այնուամենայնիվ այս համառոտ շարադրանքից իսկ, կարծում ենք, կարելի է գտնել ընդհանուր պատկերացում կազմել աշխատության բնույթի և նրա հիմնական արժանիքների մասին:

Այժմ՝ աշխատության մի քանի թերությունների մասին:

Արդեն նշել ենք, որ Վ. Առաքելյանը կարողանում է նուրբ մանրամասների մեջ մտնել, և դա ոչ բոլորին կարող է հաջողվել: Բայց մեզ թվում է, որ կատեգորիաները երբեմն այնքան և այնպես են մանրացվում, որ ընդհանուր օրինաչափությունը խիստ աղոտ է երևում: Այսպես, ընդունված է, որ տրական հոլովի հիմնական հատկանշական

ֆունկցիան հանդման անուղղակի խնդիրն է: Աշխատությունից, սակայն, այն տպավորությունն է ստացվում, որ հանդման խնդիրը, հեռուստացիա և համապատասխան հոլովական իմաստը, տրական 16 խնդիրներից (դեռ պարագաները չհաշված) և իմաստներից միայն մեկն է: Սրբեն շարահյուսական այս կամ այն պաշտոնը հանգեցվում է այս կամ այն բառախմբի իմաստային որոշ յուրահատկության: Այդպիսիք են, օրինակ, հաղորդման, վերածման, ուղևորման կամ ուղղության, հնազանդության, ապավինության անուղղակի խնդիրները:

Մեր հաջորդ դիտողությունը վերաբերում է աշխատության կառուցվածքին, հարցերի ուսումնասիրման և շարադրման սխեմային: Շարահյուսական յուրաքանչյուր կատեգորիայի ուսումնասիրությունը կատարված է ըստ խոսքի մասերի, ըստ առանձին բառախմբերի: Դա որքան նպատակահարմար է առանձին խոսքի մասերի շարահյուսական կիրառությունների ամփոփ ուսումնասիրման առումով, նույնքան էլ աննպատակահարմար է շարահյուսական ընդհանուր օրինաչափությունների բացահայտման, ինչպես և աշխատության մատչելիության տեսակետից: Օրինակ, որոշիչի և որոշյալի համաձայնություն քննության մեջ այդպիսի մոտեցման հետևանքով յուրաքանչյուր խոսքի մասի դիրքը տվյալ հարցում հաջողությամբ է ներկայացվում, իսկ համաձայնության միևնույն կանոնի դրսևորումները մնում են ցրված տարբեր խոսքի մասերի վերաբերող տարբեր պարագրաֆներում: Եվ որպեսզի ընթերցողը իմանա, ասենք, թե ժամանակակից հայերենում ո՞ր դեպքում է որոշյալը գրվում եղակի թվով, պետք է կարգա այդ ամբողջ բաժինը և տարբեր տեղերում գտնի այդ հարցի պատասխանը:

Վերահիշյալ սխեմայի հետևանքով, օրինակ, միևնույն խնդիրը հեղինակը քննում է տարբեր բաժիններում, նայած՝ կապով է արտահայտված, թե՞ միայն հոլովով: Նույնիսկ տարբեր հոլովներով արտահայտված միևնույն անդամը քննված են տարբեր բաժիններում: Նպատակահարմար կլիներ շարահյուսության, մանավանդ ամբողջական, ամփոփիչ բնույթի ուսումնասիրության մեջ հարցերը քննել՝ ելակետ ունենալով շարահյուսական կատեգորիան և վերջինից՝ զնալ դեպի ձևաբանությունն ու բառային կազմը և ոչ թե հակառակը:

Զգացվում է հիմնավոր բացատրությունների կարիքը մի շարք հարցերի վերաբերյալ: Այսպես, քերականության գործող դասագրքերում նախադասության բաղադրի անդամներ ասելով՝ նկատի են առնվում երկրորդական բաղադրի անդամները միայն: Իսկ բաղադրի գլխավոր անդամներով նախադասությունները գիտվում են որպես բարդ միավորյալ նախադասություն: Վ. Առաքելյանը նախադասության անդամների բաժնում, ըստ երևույթի, հետևելով ուսական քերականագիտությանը, քննում է թե՛ երկրորդական և թե՛ գլխավոր անդամների բաղադրի կիրառությունները՝ դրանով իսկ անուղղակիորեն բարդ միավորյալ նախադասություններ համարելով պարզ նախադասություն, առանց, սակայն, որևէ բացատրություն ունենալով այդպիսի մոտեցման վերաբերյալ: Ավելի հիմնավոր բացատրությունների կարիք զգացվում է նաև նախադասության, ստորոգման և այլ հարցերի վերաբերյալ:

Համամիտ չենք հեղինակի հետ մի քանի հարցերում ևս:

Այսպես, աշխատության մեջ նախադասության տիպերի որոշման հիմունք է համարված արտահայտման նպատակը (եղանակը): Դա ճիշտ կլիներ այն դեպքում, եթե նախադասության տիպերի և արտահայտության նպատակների միջև լինեին օրինաչափ համապատասխանություն, որպիսին, սակայն, ոչ միշտ է, որ կա: Այսպես, օրինակ, Ջալենցի «Եվ մի՞թե ես չեմ գեցի Ձեր կռիվը կարմիր, ընկերներ» նախադասությունը հարցական է իր տեսակով, բայց խոսողի նպատակը հարցում արտահայտելը չէ, փաստորեն խոսողի նպատակն է՝ հաստատել, որ ինքը, իրոք, երգել է կռիվը կարմիր: Ժիշտ կլինեին նախադասությունների տիպերի որոշման հիմունք համարել նախադասության բնույթը, որի տակ մենք հասկանում ենք նախադասության ինտոնացիայի և ստորոգյալի եղանակային հատկանիշի միասնությունը:

Համամիտ չենք հեղինակի հետ անորոշ դերբալի սեռականի և ապառնի դերբայի տարբերակման հարցում: Եթե անորոշ դերբայի սեռականը, ինչպես կարծում է ընկ. Առաքելյանը, ապառնիության իմաստ չունենար, ապա նրանից չէր առաջանա ապառնի դերբայ: Հիշենք, որ ապառնիության իմաստ կա բայական արմատ ունեցող շատ գոյականների սեռական հոլովի մեջ նույնիսկ:

